ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 12 » Հոկտեմբերի 2025 թ. N 139-Ա/1

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 12-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝ մասնագիտացված խնամատար ծնողների և առողջական խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքով զբաղվող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց համար նախատեսված վերապատրաստման դասընթացի ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ վերապատրաստման դասընթացը կազմակերպել և անցկացնել հեռավար եղանակով՝ առաջնորդվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով:

3. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում դասընթացի մասին հայտարարությունը (առանց առողջական խնդիրներ կամ հաշմանդամություն

ունեցող երեխայի խնամքով զբաղվող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց անձնական տվյալները հրապարակելու), ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով հաստատված մասնագիտացված խնամատար ծնողների և առողջական խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքով զբաղվող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց դասընթացի թեմաները և ուսումնական նյութերը տեղադրել Նախարարության պաշտոնական կայքերում:

4. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում մասնագիտացված խնամատար ծնողների և առողջական խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքով զբաղվող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ցուցակները, ինչպես նաև այդ անձանց անձնագրերի/նույնականացման քարտերի պատճենները տրամադրել «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

5. Նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝

1) վերապատրաստման դասընթացն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախարարությանը ներկայացնել դասընթացներն ավարտած մասնակիցների ցանկերը՝ դրանում ներառելով մասնակցի անունը, ազգանունը և անձնագրային տվյալները,

2) մինչև սույն թվականի դեկտեմբերի 5-ը՝ Նախարարություն ներկայացնել հաշվետվություն անցկացված դասընթացի վերաբերյալ՝ ներառելով մասնակիցների առաջարկությունները և գոհունակության գնահատման արդյունքները:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

Ստորագրող
ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ
3114820360

2025-11-12 18:54:53 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2025 թվականի նոյեմբերի 12-ի N 139-Ա/Ն հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խմբի համարը	Խմբում ընդգրկված ունկնդիրների թիվը	Դասընթացում ընդգրկված ունկնդիրների մշտական բնակության վայրը	Դասընթացի անցկացման եղանակը	Դասընթացի անցկացման ժամկետը	Դասընթացի ծավալը
1	11	1. Կոտայքի մարզ, 4 ունկնդիր 2. Երևան քաղաք, 4 ունկնդիր 3. Սյունիքի մարզ, 1 ունկնդիր 4. Լոռու մարզ, 2 ունկնդիր	Հեռավար	24. 11.2025-26.11.2025 ժամը 10:00-14:30	24 ժամ